ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 հուլիսի 2026 թ. N 55-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 14-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասին համապատասխան՝ ավագանին **ո ր ո շ ու մ է՝**

1. Հաստատել Ջերմուկ համայնքի ավագանու 2026 թվականի հուլիսի 14–ի արտահերթ նիստի հետևյալ *օ ր ա կ ա ր գ ը՝*

1.1. Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքի 2027-2029 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագիրը հաստատելու մասին

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ Ա. Ղազարյան

1.2. Ջերմուկ համայնքի 2026 թվականի բյուջեի 2-րդ եռամսյակի կատարման վերաբերյալ համայնքի ավագանուն հաղորդում ներկայացնելու մասին

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ Ա. Ղազարյան

1.3. Ջերմուկ համայնքի 2026 թվականի բյուջեի փոփոխությունները հաստատելու՝ բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից գումար հատկացնելու մասին

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ Ա. Ղազարյան

1.4. Ջերմուկ համայնքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 24-ի N 90-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ Ա. Ղազարյան

1.5. Ջերմուկ համայնքի ավագանու 2023 թվականի փետրվարի 24-ի N 14-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին.

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ Ա. Ղազարյան

1.6. Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքի ցամաքային տարածքի ծածկույթի դասակարգմանը համաձայնություն տալու մասին.

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գ. Թադևոսյան

1.7. Ջերմուկ համայնքի 2026 թվականի հողային հաշվեկշռին համաձայնություն տալու մասին

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գ. Թադևոսյան

1.8. Դրամական հատկացում կատարելու մասին

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի սոցիալական աջակցության, առողջապահության, կրթության, մշակույթի, սպորտի և երիտասարդության հարցերի բաժնի պետ Մ. Մարգարյան

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՅՎԱԶՅԱՆ ՄԽԻԹԱՐ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ՄԱՆԱՆ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԳՈՀԱՐ

ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ԱՐԿԱԴԻ

ՍԱՐԳՍՅԱՆ ԼՈՒՍԻԿ

ՍԱՐԳՍՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՎԱՀԱՆՅԱՆ ՎԱՐՈՒԺԱՆ

ՎԱՐԴԱԶԱՐՅԱՆ ԱՆՆԱ

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՄԱՆԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ

2026 թ. հուլիսի 14
ք. Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 հուլիսի 2026 թ. N 56-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2027-2029 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ մասին և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 27.1–ին հոդվածին համապատասխան ավագանին **ո ր ո շ ու մ է՝**

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքի 2027-2029 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

2. Ընդունել ի գիտություն, որ համայնքի կարճաժամկետ խնդիրները դիտարկվում են արդեն միջնաժամկետ (ՄԺԾԾ երեք տարվա կտրվածքով) կանխատեսումների համատեքստում, եկամուտները կանխատեսվում են համայնքային բյուջեին ամրագրված եկամուտներին առնչվող հարաբերությունները կարգավորող ՀՀ օրենսդրությամբ, ծախսերը հստակ արտացոլում են համայնքի զարգացման առաջնահերթություններն ու գերակայություններն ըստ գործառնական ոլորտների:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -8

ԱՅՎԱԶՅԱՆ ՄԽԻԹԱՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ ՄԱՆԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ ԳՈՀԱՐ

ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ԱՐԿԱԴԻ ՍԱՐԳՍՅԱՆ ԼՈՒՍԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՎԱՀԱՆՅԱՆ ՎԱՐՈՒԺԱՆ ՎԱՐԴԱԶԱՐՅԱՆ ԱՆՆԱ

Դեմ – 0 Ձեռնպահ -0

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՄԱՆԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ

2026 թ. հուլիսի 14
ք. Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 հուլիսի 2026 թ. N 57-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ 2-ՐԴ ԵՌԱՄՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒՆ ՀԱՂՈՐԴՈՒՄ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ և 6-րդ կետերի, 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետին և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 35-րդ հոդվածի համաձայն՝ ավագանին **ո ր ո շ ու մ է՝**

1. Հաստատել Ջերմուկ համայնքի 2026 թվականի բյուջեի երկրորդ եռամսյակի կատարման հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՅՎԱԶՅԱՆ ՄԽԻԹԱՐ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ՄԱՆԱՆ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԳՈՀԱՐ

ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ԱՐԿԱԴԻ

ՍԱՐԳՍՅԱՆ ԼՈՒՍԻԿ

ՍԱՐԳՍՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՎԱՀԱՆՅԱՆ ՎԱՐՈՒԺԱՆ

ՎԱՐԴԱԶԱՐՅԱՆ ԱՆՆԱ

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՄԱՆԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ

2026 թ. հուլիսի 14
ք. Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 հուլիսի 2026 թ. N 58-Ն

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ՝ ԲՅՈՒՋԵԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՄԱՍԻ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԻՑ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ և 6-րդ կետերի, 90-րդ հոդվածի 6-րդ մասի, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 29-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասերի համաձայն՝ ավագանին **ո ր ո շ ու մ է՝**

1. Ջերմուկ համայնքի 2026 թվականի բյուջեի ծախսային մասում վարչական մասի պահուստային ֆոնդի՝ բաժին 11, խումբ 01, դաս 02, ծրագիր 51, 210002-«ՀՀ համայնքների պահուստային ֆոնդ» գործառնական նշանակության ծախսերի կատարման նախահաշվի «4891-պահուստային միջոցներ» տնտեսագիտական հոդվածը նվազեցնել 35.0 (երեսունհինգ) միլիոն ՀՀ դրամով, որից 30.0 (երեսուն) միլիոն ՀՀ դրամն ուղղել ֆոնդային բյուջեի «06-02-01-55- համայնքի զարգացում» գործառնական դասակագրման «5113- շենքերի և շինությունների կապիտալ նորոգում» տնտեսագիտական հոդվածին՝ համայնքում կապիտալ ծախսերի իրականացման նպատակով, իսկ 5.0 (հինգ) միլիոն ՀՀ դրամը «10-07-01-51-սոցիալական ծրագրեր» գործառնական նշանակության ծախսերի կատարման նախահաշվի «4729- այլ նպաստներ բյուջեից» տնտեսագիտական հոդվածին՝ սոցիալական ծրագրերի իրականացման համար:

2. Հաստատել Ջերմուկ համայնքի 2026 թվականի բյուջեի՝ սույն որոշմամբ կատարված փոփոխությունները՝ ի գիտություն ընդունելով Ջերմուկ համայնքի 2026 թվականի բյուջեն՝ ս/թ հուլիսի 15-ի դրությամբ՝

Ընդամենը՝ եկամտային մաս՝ 991,466.3 հազար ՀՀ դրամ

ծախսային մաս՝ 991,466.3 հազար ՀՀ դրամ

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՅՎԱԶՅԱՆ ՄԽԻԹԱՐ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ՄԱՆԱՆ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԳՈՀԱՐ

ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ԱՐԿԱԴԻ

ՍԱՐԳՍՅԱՆ ԼՈՒՍԻԿ

ՍԱՐԳՍՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՎԱՀԱՆՅԱՆ ՎԱՐՈՒԺԱՆ

ՎԱՐԴԱԶԱՐՅԱՆ ԱՆՆԱ

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՄԱՆԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ**

2026 թ. հուլիսի 14
ք. Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 հուլիսի 2026 թ. N 59-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի N 90-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով և 34-րդ հոդվածով՝ ավագանին **ո ր ո շ ու մ է՝**

1. Ջերմուկ համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 24-ի «Ջերմուկ համայնքի ենթակա բյուջետային հիմնարկների և ՀՈԱԿ-ների աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակները և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու, Ջերմուկ համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 25-ի N 78-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» 90-Ա որոշման մեջ կատարել փոփոխություն՝ «Ջերմուկ համայնքի ճոպանուղի» համայնքային հիմնարկի հաստիքացուցակը հաստատել նոր խմբագրությամբ՝ *համաձայն հավելվածի*:

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետով կատարված փոփոխությունների արդյունքում Ջերմուկ համայնքի ճոպանուղի» համայնքային հիմնարկի հաստիքացուցակից աշխատանքային անհրաժեշտությամբ պայմանավորված հանվել են «հսկիչ» և «պահակ» հաստիքային միավորները, ավելացվել է բուժքրոջ մեկ միավոր հաստիք:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից և տարածվում է 2026 թվականի հուլիսի 1-ից հետո առաջացած հարաբերությունների վրա:

Կողմ -8

ԱՅՎԱԶՅԱՆ ՄԽԻԹԱՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ ՄԱՆԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ ԳՈՀԱՐ

ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ԱՐԿԱԴԻ ՍԱՐԳՍՅԱՆ ԼՈՒՍԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՎԱՀԱՆՅԱՆ ՎԱՐՈՒԺԱՆ ՎԱՐԴԱԶԱՐՅԱՆ ԱՆՆԱ

Դեմ – 0 Ձեռնպահ - 0

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՄԱՆԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ

2026 թ. հուլիսի 14
ք. Ջերմուկ

Հավելված
Ջերմուկ համայնքի ավագանու
2026 թվականի հուլիսի 14-ի
N 59-Ա որոշման

«Հավելված
Ջերմուկ համայնքի ավագանու
2025 թվականի դեկտեմբերի 24-ի
N 90-Ա որոշման

«ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՃՈՊԱՆՈՒՂԻ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿ

աշխատակիցների թվաքանակը՝ 12

Հ/Հ	Հաստիքի անվանումը	Հաստիքային միավորները	Դրույքի չափը (դրամ)	Ընդամենը աշխատավարձ (դրամ)
1	*2*	*3*	*4*	*5*
1	տնօրեն	1	333,133	333,133
2	հաշվապահ	0.5	276,500	138,250
3	գործավար	0.5	276,500	138,250
4	տոմսավաճառ	1	174,636	174,636
5	դիզելավար	1	210,000	210,000
6	հիդրավլիկ-մասնագետ	1	210,000	210,000
7	ենթակայանների պատասխանատու	1	165,000	165,000
8	***փողը հանվել է***			
9	օպերատոր	2	210,000	420,000
10	հավաքարար	2	130,000	260,000
11	տնտեսվար	1	130,000	130,000
12	***փողը հանվել է***			
13	բանվոր	1	130,000	130,000
14	բուժքույր	1	130,000	130,000
Ընդամենը		**13**	**2,375,769**	**2,439,269**

ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝

ԳՈՀԱՐ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 հուլիսի 2026 թ. N 60-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 24-Ի N 14-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասին և 34-րդ հոդվածին համապատասխան, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 6-րդ պարբերությունը՝ ավագանին **ո ր ո շ ու մ է՝**

1. Ջերմուկ համայնքի ավագանու 2023 թվականի փետրվարի 24-ի «Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայողների պաշտոնային դրույքաչափի նկատմամբ սահմանվող հավելավճարի կիրառման կարգը և չափը հաստատելու և Ջերմուկ համայնքի ավագանու 2014 թվականի օգոստոսի 1-ի N 27-Ա որոշման 1-ին կետի «գ» և «դ» ենթակետերը ուժը կորցրած ճանաչելու մասին» N 14-Ա որոշման մեջ կատարել հետևյալ լրացումները՝

ա/ որոշման վերնագրում «ՀԱՎԵԼԱՎՃԱՐԻ» բառից հետո ավելացնել «ԵՎ ԼՐԱՎՃԱՐԻ» բառը

բ/ որոշման 1-ին կետում «հավելավճարների» բառից հետո ավելացնել «, պաշտոնավարման ընթացքում համապատասխան իրավական ակտով ավելացված գործառույթների կատարման համար լրավճարի» կետադրական նշանը և բառերը

գ/ որոշման 6-րդ կետում «հավելավճարները» բառից հետո ավելացնել «և լրավճարները» բառը

դ/ ավելացնել նոր՝ 5.1-ին, 5.2-րդ և 5.3-րդ կետեր՝ հետևյալ խմբագրությամբ

* «5.1. Համայնքային ծառայողների համար սահմանվում է հավելավճար ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով մասնագիտական որակավորում ստանալու (ունենալու) դեպքում, եթե նրանք այդ որակավորմամբ գործունեություն ծավալում են Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմում:»

* «5.2. Համայնքային ծառայողների համար սահմանվում է լրավճար պաշտոնին նշանակվելուց հետո համապատասխան իրավական ակտով ավելացված՝ առնվազն երեք գործառույթների կատարման համար»

* «5.3. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով մասնագիտական որակավորմամբ աշխատելու համար հավելավճարի և համապատասխան իրավական ակտով ավելացված գործառույթների կատարման համար համայնքային ծառայողի պաշտոնային դրույքաչափի նկատմամբ կիրառվում է տոկոսային ավելացում 15 %-ի չափով:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՅՎԱԶՅԱՆ ՄԽԻԹԱՐ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ՄԱՆԱՆ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԳՈՀԱՐ

ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ԱՐԿԱԴԻ

ՍԱՐԳՍՅԱՆ ԼՈՒՍԻԿ

ՍԱՐԳՍՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՎԱՀԱՆՅԱՆ ՎԱՐՈՒԺԱՆ

ՎԱՐԴԱԶԱՐՅԱՆ ԱՆՆԱ

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՄԱՆԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ**

2026 թ. հուլիսի 14
ք. Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 հուլիսի 2026 թ. N 61-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՑԱՄԱՔԱՅԻՆ ՏԱՐԱԾՔԻ ԾԱԾԿՈՒՅԹԻ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի ապրիլի 11-ի «Հայաստանի Հանրապետության ցամաքային տարածքի ծածկույթի դասակարգման կարգը հաստատելու մասին» թիվ 431-Ն որոշմամբ հաստատված կարգի 13-րդ կետի դրույթներով՝ ավագանին **ո ր ո շ ու մ է՝**

1. Համաձայնություն տալ 2026 թվականի օգոստոսի 1-ի դրությամբ կազմված Ջերմուկ համայնքի ցամաքային տարածքի ծածկույթի դասակարգմանը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՅՎԱԶՅԱՆ ՄԽԻԹԱՐ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ՄԱՆԱՆ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԳՈՀԱՐ

ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ԱՐԿԱԴԻ

ՍԱՐԳՍՅԱՆ ԼՈՒՍԻԿ

ՍԱՐԳՍՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՎԱՀԱՆՅԱՆ ՎԱՐՈՒԺԱՆ

ՎԱՐԴԱԶԱՐՅԱՆ ԱՆՆԱ

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՄԱՆԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ

2026 թ. հուլիսի 14
ք. Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 հուլիսի 2026 թ. N 62-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՂԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇՌԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2000 թվականի հոկտեմբերի 23-ի «Հայաստանի Հանրապետության հողային հաշվեկշիռը կազմելու կարգը հաստատելու մասին» N 656 որոշմամբ հաստատված կարգի 9-րդ կետով՝ ավագանին **ո ր ո շ ու մ է՝**

1. Համաձայնություն տալ 2026 թվականի հուլիսի 1-ի դրությամբ կազմված Ջերմուկ համայնքի հողային հաշվեկշռին՝ համաձայն N 1 և N 2 հավելվածների (Ձև 22 և Ձև 22ա):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՅՎԱԶՅԱՆ ՄԽԻԹԱՐ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ՄԱՆԱՆ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԳՈՀԱՐ

ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ԱՐԿԱԴԻ

ՍԱՐԳՍՅԱՆ ԼՈՒՍԻԿ

ՍԱՐԳՍՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՎԱՀԱՆՅԱՆ ՎԱՐՈՒԺԱՆ

ՎԱՐԴԱԶԱՐՅԱՆ ԱՆՆԱ

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՄԱՆԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ**

2026 թ. հուլիսի 14
ք. Ջերմուկ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Ձև N 22

հողային ֆոնդի առկայության և բաշխման

(ըստ նպատակային նշանակության, հողատեսքերի ու գործառնական նշանակության և սեփականության սուբյեկտների, առ 01/07/2026 թ.)

Մարզ: Վայոց Ձոր (անվանում) — 10 (Կոդ)

Համայնք: Ջերմուկ (անվանում) — 827 (Կոդ)

(հեկտարներով)

NN	Նպատակային նշանակություն	Հողատեսք, գործառնական նշանակություն	Կոդի NN	Ընդամենը ∑2+3+4+8+12ª	ՀՀ քաղաքացիների	ՀՀ իրավաբանական անձանց	համայնքային: ընդամենը (5+6+7)	համայնքային: անհատույց օգտագործման տրված	համայնքային: վարձակալության տրված	համայնքային: վարձակալության և օգտագործման չտրված	պետական: ընդամենը (9+10+11)	պետական: անհատույց օգտագործման տրված	պետական: վարձակալության տրված	պետական: վարձակալության և օգտագործման չտրված	Օտարերկրյա ... ՀՀ-ում ...
	Ա	Բ	Գ	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1.1	1. Գյուղատնտեսական	վարելահող		1048.36	835.72	11.04	155.34		61.61	93.73	46.27		36.16	10.11	
1.2		բազմ		172.27	165.17		7.10		6.32	0.78					
1.2.1		այդ թվումª		172.27	165.17		7.10		6.32	0.78					
1.2.2		խաղողի այգի													
1.2.3		այլ բազմամյա													
1.3		խոտհարք		736.89	436.94	0.47	236.78		71.00	165.78	62.70		12.40	50.30	
1.4		արոտ		6293.67	116.77	18.34	4158.01		1820.94	2337.07	2000.55		693.80	1306.75	
1.5		այլ հողատեսքեր		1361.07	51.31	22.22	1023.18		74.89	948.29	264.36		46.50	217.86	
1		Ընդամենը		9612.26	1605.90	52.07	5580.41		2034.76	3545.64	2373.88		788.86	1585.02	
2.1	2.Բնակավայրերի	բնակելի		183.18	145.13	0.05	38.04	0.01	0.90	37.14					
2.1.1		այդ թվումª		131.96	131.96										
2.1.2		այգեգործական													
2.2		հասարակական		85.54	71.49	5.92	2.68	0.09	2.58	0.01477	5.47	5.47			
2.3		խառը		10.62	10.29		0.33			0.33					
2.4		ընդհանուր		56.34			56.34		0.11	56.23					
2.5		այլ հողեր		99.82	2.90		96.85		0.47	96.38					
2		Ընդամենը		435.50	229.81	5.97	194.25	0.10	4.05	190.10	5.47	5.47			
3.1	3. Արդյունաբ., ընդերքօգտ.	արդյունաբերությ		246.58	1.09	148.36	95.07		0.98	94.09	2.06			2.06	
3.2		գյուղտնտեսակա		24.02	5.21		16.19		7.59	8.60	2.62			2.62	
3.3		պահեստարաննե		2.53			2.53			2.53					
3.4		ընդերք		1043.14			303.00		303.00		740.14		737.85	2.29	
3		Ընդամենը		1316.27	6.30	148.36	416.79		311.57	105.22	744.82		737.85	6.97	
4.1	4.Էներգետիկ այլ, տրանսպորտ	էներգետիկայի		12.46		1.77	3.82		1.58	2.24	6.87	4.81	1.23	0.83	
4.2		կապի		0.48		0.08	0.40			0.40					
4.3		տրանսպորտի		56.29			2.62			2.62	53.67			53.67	
4.4		կոմունալ		8.25			8.25	2.66	3.20	2.39					
4		Ընդամենը		77.48		1.85	15.09	2.66	4.78	7.65	60.54	4.81	1.23	54.50	
5.1	5. Հատուկ պահպանվող տարածքների	բնապահպանակ		4514.54							4514.54	4514.54			
5.1.1		այդ թվումª արգել													
5.1.2				4514.54							4514.54	4514.54			
5.1.3															
5.2		առողջարարակա		24.60	0.07	2.25	22.28		1.35	20.93					
5.3		հանգստի		10.25	5.61		4.51			4.51					0.13
5.4		պատմական և		39.95			3.92			3.92	36.03			36.03	
5		Ընդամենը		4589.34	5.68	2.25	30.71		1.35	29.36	4550.57	4514.54		36.03	0.13
6	6.Հատուկ նշանակության	Ընդամենը		1.20			1.20	1.20							
7.1	7. Անտառային	անտառ		3606.73							3606.73	6.53	1.82	3598.38	
7.2		թփուտ		166.40							166.40			166.40	
7.3		վարելահող													
7.4		խոտհարք		3.63							3.63			3.63	
7.5		արոտ		8.05							8.05			8.05	
7.6		այլ հողեր		130.82							130.82			130.82	
7		Ընդամենը		3915.63							3915.63	6.53	1.82	3907.28	
8.1	8. Ջրային	գետեր		68.22							68.22		0.02	68.20	
8.2		ջրամբարներ		126.17	0.45		4.98			4.98	120.74			120.74	
8.3		լճեր		3.35			3.35		1.13	2.22					
8.4		ջրանցքներ		12.95			0.28			0.28	12.67			12.67	
8.5		հիդրոտեխ. և		0.02							0.02			0.02	
8		Ընդամենը		210.71	0.45		8.61	0.00	1.13	7.48	201.65	0.00	0.02	201.63	
9.1	9. Պահուստային	աղուտներ													
9.2		ավազուտներ													
9.3		ճահիճներ													
9.4															
9.5		այլ													
9		Ընդամենը													
ԸՆԴԱՄԵՆԸ ՀՈՂԵՐ				20158.39	1848.15	210.50	6247.06	3.96	2357.65	3885.45	11852.56	4531.35	1529.78	5791.43	0.13

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ　　Ձև 22ա

Հայաստանի Հանրապետության ոռոգվող հողերի առկայության և բաշխման

(ըստ նպատակային նշանակության, հողատեսքերի և սեփականության սուբյեկտների)

Մարզ[a]	Վայոց Ձոր	10
	(անվանումը)	(կոդ)
Համայնք[a]	Ջերմուկ	827
	(անվանումը)	(կոդ)

NN	Նպատակային նշանակություն	Գործառնական նշանակություն, հողատեսք	Կոդ N/N	Ընդամենը ոռոգվող հողեր ¥2+3+4+5+6º	Սեփականության սուբյեկտ				
					ՀՀ պետական	ՀՀ համայնքային	Քաղաքացիների	Իրավաբանական անձանց	Օտարերկրյա քաղաքացիների
	Ա	Բ	Գ	1	2	3	4	5	6
1.1	1. Գյուղատնտեսական	վարելահող		31.4	31.4				
1.2		բազմամյա տնկարկներ, ընդամենը		170.0	163.3		6.7		
1.2.1		այդ թվում[a] պտղատու այգի		170.0	163.3		6.7		
1.2.2		խաղողի այգի							
1.2.3		այլ							
1.3		խոտհարք		97.6	97.6				
1.4		արոտ							
1.5		այլ հողատեսքեր							
1		Ընդամենը (1.1+1.2+1.3+1.4+1.5)		299.0	292.3		6.7		
2.1	2.Բնակավայրերի	բնակելի կառուցապատման		45.0	45.0				
2.1.1		այդ թվում տնամերձ հողեր		45.0	45.0				
2.1.2		այգեգործական (ամառանոցային)							
2.2		ընդհանուր օգտագործման							
2.3		այլ հողեր							
2		Ընդամենը (2.1+2.2+2.3)		45.0	45.0				
3	3. Արդյունաբ., ընդերքօգտ., և այլ արտ. նշանակության								
4	4. Էներգետիկայի, տրանսպ., կապի, կոմունալ ենթակառուցվածքների								
5	5. Հատուկ պահպանվող տարածքների								
6	6. Հատուկ նշանակության								
7.1	7. Անտառային	անտառ							
7.2		թփուտ							
7.3		վարելահող							
7.4		խոտհարք							
7.5		արոտ							
7.6		այլ հողեր							
7		Ընդամենը (7.1+7.2+7.3+7.4+7.5+7.6)							
8	8. Ջրային								
9	9. Պահուստային								
ԸՆԴԱՄԵՆԸ ՈՌՈԳՎՈՂ ՀՈՂԵՐ ¥1+2+3+4+5+6+7+9º				344.0	337.3		6.7		

Համայնքի ղեկավար՝ ______________ /ստորագրություն, կնիք/　　կատարող՝ ______________ /ստորագրություն/

ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ ՋԵՐՄՈՒԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ · RA VAYOTS DZOR REGION JERMUK MUNICIPALITY · 08917563

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 հուլիսի 2026 թ. N 63-Ա

ԴՐԱՄԱԿԱՆ ՀԱՏԿԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով՝ ավագանին **ո ր ո շ ու մ է՝**

1. Հաշվի առնելով Ջերմուկ քաղաքի բնակիչ Նարինե Ժորայի Առաքելյանի՝ համայնքի ղեկավարին հասցեագրված դիմումը՝ ս/թ հոկտեմբերի 26-ից 31-ը կայանալիք «Talent Show» արվեստի միջազգային մրցույթ–փառատոնին Ջերմուկ համայնքի բնակիչ, Շ. Ազնավուրի անվան արվեստի դպրոցի սան Ժենյա Գոռի Բաբայանի մասնակցության ծախսերի մի մասի փոխհատուցման նպատակով մորը՝ Նարինե Ժորայի Առաքելյանին հատկացնել 200000 (երկու հարյուր հազար) դրամ:

2. Ս/թ մայիսի 24-ից հունիսի 3-ը Երևանում կայացած Ստեփան Ավագյանի՝ մինչև 12 տարեկանների հուշամրցաշարում մասնակցություն ունեցած և փայլուն արդյունքներ գրանցած Վան Աշոտի Մնացականյանին և Դավիթ Կարենի Պողոսյանին պարգևատրել ֆինանսական հատկացմամբ՝ 100 000-ական (հարյուր հազարական) դրամի չափով՝ գումարը փոխանցելով մարզիկների ծնողներին՝ ի դեմս Աշխեն Սարգսյանի և Գոհար Բալյանի:

3. Ջերմուկ համայնքի ավագանու 2025 թվականի մայիսի 27-ի «Ջերմուկ համայնքի 2025-2026 թվականների Համայնքային սոցիալական ծրագիրը հաստատելու մասին» N 45-Լ որոշմամբ սահմանված՝ «Տարեցների ցերեկային կենտրոնների կազմակերպում/ստեղծում» համայնքային սոցիալական ծրագրի շարունակականությունն ապահովելու նպատակով «Սըլուշն Հաբ» համայնքային զարգացման հասարակական կազմակերպությանը հատկացնել 4336250 (չորս միլիոն երեք հարյուր երեսունվեց հազար երկու հարյուր հիսուն) դրամ:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -8

ԱՅՎԱԶՅԱՆ ՄԽԻԹԱՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ ՄԱՆԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ ԳՈՀԱՐ

ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ԱՐԿԱԴԻ ՍԱՐԳՍՅԱՆ ԼՈՒՍԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՎԱՀԱՆՅԱՆ ՎԱՐՈՒԺԱՆ ՎԱՐԴԱՋԱՐՅԱՆ ԱՆՆԱ

Դեմ – 0 Ձեռնպահ - 0

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՄԱՆԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ